

**«Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» թիվ 5222-ԱՄ վարկային ծրագիր
Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկ
Հետաքրքրություն ներկայացնելու հրավեր
(Խորհրդատվական ծառայություններ-Անհատ խորհրդատուի ընտրություն)**

Վերնագիր: Անհատ խորհրդատու՝ շինարարական աշխատանքների աջակցության և համակարգման նպատակով

Ծածկագիր: CR4/B-C/IC/033-19

Դրույք: Լրիվ օր

Իրավասություն: Բոլոր խորհրդատուները որոնք համապատասխանում են նշված պահանջներին

Սկիզբ: 01 Սեպտեմբեր 2019թ.

Տևողություն: 22 ամիս, երկարացնելու հնարավորությամբ

Տեղակայում: Երևան, ՀՀ

Աշխատանքի նկարագիր: Սույնով ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ-ն, որը ֆինանսավորում է ստանում Համաշխարհային Բանկից, Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամից և ՀՀ Կառավարությունից հրավիրում է Անհատ խորհրդատուի՝ շինարարական աշխատանքների աջակցության և համակարգման նպատակով միանալ թիմին:

Աշխատանքային պարկատանություններ:

- Կառուցվող, վերակառուցվող և վերանորոգվող օբյեկտների և շրջակա տարածքների համակարգչային մոդելավորում
- Բուժ. հաստատությունների տիպային նախագծերի մշակում, մասնավորապես՝ հատակագծային լուծումներ, ճակատների մշակում, շրջակա տարածքների մոդելավորում, հիվանդանոցների կահավորում և այլ:
- Շին. աշխատանքների փաստացի ծավալների չափագրում;
- Իրականացնել հսկողություն կառուցվող օբյեկտների շինարարական-մոնտաժային աշխատանքների, ինչպես նաև օգտագործվող շինանյութերի, շինվածքների, կոնստրուկցիաների հաստատված նախագծի՝ գործող նորմերի ու ստանդարտների համապատասխանությունը ապահովելու նպատակով;
- Կազմակերպել և պատրաստել ցուցադրական նյութեր (պաստառներ) օբյեկտների նախագծման և շին. աշխատանքների ընթացքի վերաբերյալ;
- Համագործակցելով թիմի մյուս անդամների հետ տեխնիկական առաջադրանքների կազմում՝ նախագծման, շին. աշխատանքների և տեխ. վերահսկողության պայմանագրերի համար;
- Իրականացնել այցելություններ շին. աշխատանքների ընթացքում (ներառյալ տեխնիկական վերահսկողության և նախագծային առաջադրանքների համար);

- Քայլ առ քայլ վերահսկում շին. աշխատանքների, նախագծման և տեխնիկական վերահսկողության համար կնքված պայմանագրերի նկատմամբ;
- Համագործակցելով ընտրված կազմակերպությունների հետ կազմել նախատեսվող շին. աշխատանքների պլանավորում, ինչպես նաև համագործակցել այլ պետական մարմինների և շահագրգիռ կողմերի հետ՝ ծրագրերի իրականացման ընթացքում առաջացած խնդիրները լուծելու նպատակով;
- Կազմել միջանկյալ հանձման ընդունման ակտեր (փաստաթղթեր) շին. աշխատանքների ընթացքի վերաբերյալ՝ պաշտոնական ձևաթղթերով;
- Կատարել նշումներ և համապատասխանաբար զեկուցել՝ շին. աշխատանքների վերաբերյալ դիտարկումների, առաջարկությունների և բաց թողումների (սխալների) վերաբերյալ;
- Պատրաստել ցանկ՝ չավարտված շին. աշխատանքների և նրանց ավարտի ժամկետների վերաբերյալ:

Պահանջվող որակավորում:

- Բարձրագույն կրթություն (ճարտարապետի որակավորում), ինչպես նաև առաջադրանքին առնչվող վերապատրաստումներ;
- Առաջադրանքին առնչվող նմանատիպ որակավորում;
- Գերազանց բանավոր և գրավոր իմացություն Հայերեն, Անգլերեն և Ռուսերեն լեզուների;
- Համակարգչային ծրագրերի իմացություն և աշխատանքային հմտություններ՝ AutoCAD, ArchiCAD and Microsoft Office.

Վարձատրություն: Մրցակցային

Դիմելու Գործընթաց: Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք ուղարկել իրենց ինքնակենսագրականները (CV) և ուղեկցող նամակները (cover letter): procurement@healthpiu.am և info@healthpiu.am էլ. փոստերին, վերնագրում հստակ նշելով “TA and Coordinator of Civil Works”.

Սկսած: 31 Հուլիս, 2019թ.

Վերջնաժամկետ: 20 Օգոստոս, 2019թ.

Կազմակերպության մասին: ՀՀ ԱՆ ,ԱԾԻԳԵ ՊՀ-ը հիմնադրվել է 1999 թվականին, իսկ պետական հիմնարկի կարգավիճակ է ստացել ՀՀ Կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ին թիվ 765 որոշման համաձայն: ՀՀ ԱՆ ,ԱԾԻԳԵ ՊՀ-ն աջակցում է ՀՀ Առողջապահության նախարարությանը և պատասխանատու է առողջապահական ծրագրերի ընդհանուր համակարգման, պլանավորման, կառավարման, վերահսկման, ներառյալ գնումների ու ֆինանսական գործառույթների իրականացման համար: **Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել <https://healthpiu.am/> վեբ կայք:**